

## Հրանտ Անանյան

/11,03,19/

Մեռը՝ արական

Տարիքը՝ 25-41

Աշխատանքային ընդհանուր ստաժը՝ 12

Մասնագիտական ստաժը՝ 12, որից՝ 8-ը՝ փաստաբան

Գիտե՞ք ինչ, օրենսդրական բացեր ես ինքս տեսնում եմ, բայց կարծում եմ՝ առավելապես օրենսդրական բացը չի, որ նման մոտեցում է ցուցաբերվում, ընդամենը ձևավորված պատկերացումնա, այսպես ասած, աչքաչափնա քրեական հետապնդման մարմինների, թե ինչպես պետք է վարվեն, մեխանիկական մոտեցումը ցանկալիա: Ծանր հանցանք, ուրեմ՝ կալանավորում: Մենց մոտեցում կա, չնայած ես մյուս կողմն էլ պիտի ասեմ հարցի. շատ հաճախ լինումա, որ ծանր հանցանքով կամ միջին ծանրության հանցանքով կիրառվումա, օրինակ, ոչ կալանավորումը: Ու դա նույնպես խնդիրա առաջացնում: Ես էս ասպեկտով էլ նայեմ, էլի, որպես փաստաբան ես չպիտի մենակ չկալանավորման կողմնակից լինեմ: Էստեղ կարծում եմ իրավիճակներ կան, որ շատ հաճախ փաստաբանն ստիպվածա լինում տուժողի շահերը պաշտպանելով, տուժողնա խնդրների առաջ կանգնում, որովհետև անհամաչափ խափանման միջոցա կիրառված լինում: Այդ թվում նաև ազդեցությունա լինում, այդ թվում նաև այդ խափանման միջոցը իր նպատակին չի ծառայում: Իմ կարծիքով էստեղ իրավական մշակույթի խնդիր կա, իրավական ընկալման խնդիր կա, աշխարհայացքի խնդիր կա, քրեական հետապնդման մարմինների մոտ, ուլքեր, որ կարող են միջնորդեն անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնեն, դատարանը քննարկի, ես կարծում եմ, որ ավելի շատ իրավական

մշակույթի խնդիր կա: Շատ հաճախ ողջամտություննա կորում. անձի նկատմամբ խափանման միջոցը ընտրվումա ինքնանպատակ, բայց խափանման միջոցը պիտի բխի տվյալ գործի փաստակազմի առանձնահատկություններից, և դա պիտի անհրաժեշտ լինի, ոչ թե ընդամենը գուտ, դե որ միշտ սենց ենք արել էս հողվածը, ուրեմ էս անգամ էլ պիտի սենց անենք: Կալանավորենք կամ չկալանավորենք: Երկու պարագայում էլ ասեմ: Սենց եմ կարծում ես:

Օրենսդրական բա՞ց, ես օրինակ շատ կուզեի կոնկրետ իրավիճակում ասել, որ մեր մոտ, օրինակ, մեխանիզմա ներդրված էս պահին, միայն մեղադրյալի փախուստի պարագայում, որպես գրավ մուծված գումարը պետականացնելու: Մենակ նման մեխանիզմ ունենք: Բայց խափանման միջոցը կիրառվումա երեք դեպքերի համար: Երբ մեղադրյալը կարող է թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, մեղադրյալը կարող է պատշաճ վարքագիծ չցուցաբերել նախաքննության ընթացքում: Օրինակ՝ անհարկի չգա քննչական գործողության, առերեսում նշանակված լինի, տուժողը գա, տուժողի ներկայացուցիչը գա, պաշտպանը գա, ինքը չգա: Այսինքն՝ կարգապահություն չապահովի: Եվ 3-րդ կարևոր ատրիբուտը դա էն է, որ անձը կարա խոչընդոտի քննությանը, դատավարության մասնակիցների՝ վկաների, տուժողների նկատմամբ անօրինական ազդեցություն թողնելու եղանակով: Մեր մոտ օրենսդրորեն միայն փախուստի պարագայումա, որ որպես գրավ մուծված գումարը կարա պետականացվի: Այսինքն՝ եթե անձը գնա տուժողին ծեծի, հայհոյի, սպառնա, բան, ու դա ակնհայտ հիմնավորվի անգամ նախաքննության ընթացքում, դա գրավը պետականացնելու հիմք չի: Կարա խափանման միջոցը փոփոխելու հիմք ծառայի, բայց գրավը պետականացնելու հիմք չի, իսկ գրավը դա այն է, որ պատշաճ վարքագիծ ապահովելու երաշխիք է բոլորիս ընկալմամբ: Ստացվումա, որ միայն փախուստը չեզոքացնելու երաշխիքա, ուրիշ ոչ մի երաշխիք չի: Ես կարծում եմ՝ էստեղ օրենսդրական բաց կա:

Գրավը առանձին չէ, կալանավորման հիմքերը երբ առկա են: Բայց շատ հաճախ ակնհայտ կարելիա կիրառել գրավ: Օրենքը դա թույլ չի տալիս: Նախադեպայի որոշումներում կա դիրքորոշում, որ գրավը կարելի է կիրառել, երբ առկա են կալանավորման հիմքերը: Բայց նորից ենք գալիս էդ արժեհամակարգի վրա: Դատավորները շատ հաճախ կիրառում են գրավը այն ժամանակ, երբ որ չկան կալանավորման հիմքերը. որպես չարյաց փոքրագույն են կիրառում: Հա՛, չասենք, որ չկա կալանավորման հիմք և պայման, թեև ակնհայտա, որ չկա, դրա փոխարեն, լավ, կիրառենք գրավ: Քանի որ մոտեցումը հենց տենցա, ես դրա համար էլ ըստ էության եմ ավելի մոտենում, ոչ թե ձևական կողմով: Ձևական կողմն այն է, որ գրավը կիրառվումա էն ժամանակ, երբ առկա են կալանման հիմքերը: Բայց Ձեզ հավատացնում եմ, որ պրակտիկայում 90 % դեպքերում գրավը կիրառվումա էն դեպքերում, երբ ողջամիտա, որ չկան կալանավորման հիմքերը: Ուղղակի ձևական հղումա արվում, որ, դե, կան կալանավորման հիմքերը: Դրա համար էս պայմաններում գրավը կարա պատշաճ երաշխիք հանդիսանա: Այ, սենց մոտեցում կա: Մենք հիմա դե ֆակտո և դե յուրե վիճակների միջև բախվում ենք: Էս եմ ուզում ասել:

Սենց իրավիճակ ասեմ: Կա անձնական երաշխավորություն խափանման միջոցը: Անձնական երաշխավորությունը ասումա երկու ճանաչված կամ մեկ բացառիկ ճանաչում ունեցող անձի պատրաստակամություննա ստանձնել մեղդրյալի պատշաճ վարքագիծը և նաև գումարա վճարում դրա համար: Նույն իրավիճակը էդտեղա: Նրանց կողմից գումարը կարա կորի միայն այն ժամանակ, երբ անձը թաքնվի քննությունից: Նրա կողմից անօրինական ազդեցություն որևէ մեկի նկատմամբ գործադրելու դեպքում գումարը չի կորում, անձնական երաշխավորություն ստանձնած անձն էլ քրեական պատասխանատվության չի ենթարկվում, որովհետև էնտեղ համ գումարի խնդիր կա, համ անձնական երաշխավորի քրեական պատասխանատվության խնդիր կա: Էլի մենակ թաքնվելու

վրա է դրված խնդիրը: Ու շատ հաճախ դատախազությունն ու քննչական մարմինը չեն կիրառում էս խափանման միջոցը, այդ թվում նաև դեմ են լինում գրավի կիրառմանը հենց էն փաստարկմամբ, որ եթե էս մարդը փախնի, անձնական երաշխավորը փողը կկորցնի, պլյուս քրեական պատասխանատվության առջև կկանգնի: Այո՛, իր անունից է վճարվում փողը: Այսինքն, եթե քննությանը միջամտելու վտանգ կա, էդ վտանգը հիմնավորա, անհիմնա, ժամանակավրեպա արդեն, թե արդիականա: Մենց: Օրենսդրական բացերը էստեղ կարելիա լրացնել, օրինակ, որ անձնական երաշխավորը կարա ստանձնի մեղադրյալի պատշաճ վարքագիծը նաև քննությանը խոչընդոտելու տեսանկյունից, մենակ փախնելու տեսանկյունից չէ, որովհետև նա էլա կալանավորում համարվում, սա էլա կալանավորում համարվում, ինչի՞ համար: Եղելա օրինակ պրակտիկների հետ քննարկել էմ, այդ թվում նաև դատավորների, ասումա, դե նա ոնց պատասխան տա, որ նա կարողա գնա, տուժողի նկատմամբ ճնշում գործադրի: Ես էլ ասում էմ, եթե օրենքն ասումա՝ փախուստի համար պետքա պատասխան տա, էն էլ կարա թողնի սահմանը հատի, թողնի Հայաստանից հեռանա, օրինակ: Այդ թվում նաև սահմանը ապօրինի հատի: Հո չի՞ գնալու նրանց դռանը կողքը սաղ օրը կուչ գա ու հետևի: Ու եթե պիտի գնա դռան կողքը կուչ գա ու հետևի, որ հանկարծ դռան շեմը չհատի ու դուրս չգա տնից: Էդ նույն բանը կարա անի նաև տուժողի, վկայի կամ դատավարության այլ մասնակցի վրա ճնշում գործադրելու տեսանկյունից: Եթե կարա գերծ պահի փախուստից, կարա գերծ պահի նաև անօրինական ազդեցությունից: Հիմա սրա սահմանազատման չափանիշը ո՞րնա: Էդ հարցին չեն կարում պատասխանել: Չկա սահմանազատման ճանապարհներ: Ես ավելին ասեմ, դու կարաս թաքնվելը կանխես, բայց հավասարաչափ կարաս կանխես, անգամ երկու անգամ ավելի կարաս կանխես անօրինական ազդեցություն, որովհետև անօրինական ազդեցությունը անձնական երաշխավորը կարա ժամանակ առ ժամանակ դատախարակչական աշխատանք կատարի նույն մեղադրյալի հետ, որ մեղադրյալը գերծ մնա տուժողի հետ հանդիպելուց, գերծ մնա տուժողին որևէ սպառնալիք ուղղելուց, գերծ մնա տուժողին

շահագրգռելուց, տուժողի բարեկամների, ընկերների վրա ինչ-որ ձևով, նրանց միջոցով տուժողի վրա ազդելուց: Նա կարա ավելի լավ, կոպիտ ասած, ձեռքը բռնած ման գա ու զերծ պահի նման վարքագծից, քան թե փախուստից: Որովհետև եթե անձը վախենումա հնարավոր քրեական պատասխանատվությունից, նա կարողա ոչ մեկին չասելով, մեկնի, բայց եթե անձը ուզումա, որևէ մեկի վրա անօրինական ազդեցություն ունենա, շատ հաճախ դիմումա ուրիշների օգնությանը, խորհրդակցումա՝ արժի-չարժի ու սենց բաներ: Դրա համար ես կարծում եմ, որ անձնական երաշխավորության պարագայում և գրավի պարագայում, եթե մենք նաև դիտարկենք հնարավորություն, որ գումարը պետականացվի, էդ անձն էլ քրեական պատասխանատվության ենթարկվի նաև անօրինական ազդեցության պարագայում, կարա էական տոկոս նվազի կալանավորման կիրառման:

Մյուս խափանման միջոցները նորմալ են, բան չեմ կարա ասեմ: Դե էնտեղ գալիսա հրամանատարության հսկողությանը հանձնելը, ծնողների հսկողությանը հանձնելը, եթե էնտեղ ծառայողա, էստեղ էլ անչափահասա, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը, դե սպառվալ էլի, էլ չունենք խափանման միջոց: Ստորագրությունա, հրամանատարների, ծնողների հսկողությունա, անձնական երաշխավորությունա, կալանավորումա: Ուրիշ խափանման միջոց չունենք: Եվ ունենք իրավիճակ, որ ասումա խափանման միջոցը կարա և խափանման միջոցը չկիրառվի: Նենց չի, որ խափանման միջոցը պտի կիրառվի: Երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը կատարի 135 հոդվածով նախատեսված գործողությունները:

Գիտե՞ք ինչ, հիմքն ու հիմնավորումը մի քիչ տարբեր եզրույթներ են. նույնը չեն: Այսինքն՝ ունենք կալանավորման պայմաններ, որ մեղադրյալ պետք է ներգրավված լինի, կառուցված քրեական գործ լինի: Սա կալանավորման պայմաններն են: Կամ պիտի լինեն որոշակի ապացույցներ, որ անձը առնչվումա հանցանքին, որ ողջամիտա, որ էս անձը կարող էր կատարած լինել այս հանցագործությունը,

այսինքն՝ անմեղության կանխավարկածը չեմ ասում ամբողջությամբ, բայց որոշակիորեն հաղթահարվումա էստեղ: Կամ մարդուն հանցանք են մեղսագրում ու դատարանը նաև ողջամտորեն պիտի գնահատի: Հա, լավ, մարդը համենայնդեպս հանցանք գործելա, թե քննիչը ներկայացրելա տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են վկայել, որ անձը հեռու չէր հանցանքից, ինչ-որ ձևով մոտիկա էս տեղի ունեցած հանցանքին: Սա կալանավորման պայմաններն են: Կալանավորման հիմքերը էն են, թե կոնկրետ քրեական գործով կա՞ն արդյոք ողջամիտ հիմքեր ենթադրելու, որ անձը կարա թաքնվի, որ անձը կարա խուսափի, որ անձը կարա անօրինական ազդեցություն գործադրի ինչ-որ մեկի վրա, որ անձը կարա թաքցնի գործի համար կարևոր նշանակություն ունեցող տվյալներ, ապացույցներ, քանի դեռ քրեական գործ է հարուցվել, անձին մեղադրյալ են ներգրավել, բայց դեռևս խուզարկություններ կան կատարելու, առերեսումներ կան կատարելու: Չհարցաքննված վկաներ կան, որոնք ողջամտորեն կարևոր նշանակություն ունեցող տվյալներ կտան: Ես սենց եմ կարծում, որ իրավիճակ շատ հաճախա լինում, որ անձին սկզբից կալանավորում են, հետո ինտերցիայի ուժով թողում են կալանքի տակ: Բայց էդ կալանավորման անհրաժեշտությունը կարա մեկ ամիս հետո վերանա՝ հաշվի առնելով, որ քրեական հետապնդման մարմինը կարա խուզարկություն էլ անի, չհարցաքննված վկաների հարցաքննի: Այսինքն՝ էն տաք հետքերով քննությունը, որ անհրաժեշտա տվյալների ձեռքբերման ու ամրագրման համար որպես ապացույց դատավարական թղթերի, ինքը կարա շատ արագ էդ հարցին լուծում տա: Պրակտիկայում մոտեցումը, սենց ասեմ, կարան մարդուն կալանավորեն, 15 օր հետո բաց թողեն: Միգուցե կարա ավելի ողջամիտ լինի, ավելի արդարացված լինի հանրային մասնավոր շահերի հարաբերակցության տեսանկյունից: Բայց լինումա, որ անձին կալանավորում են, էդ գործողություններն անում են առաջիկա ամսում, բայց դեռևս մի 5-6 ամիս էլ անձին պահում են կալանքի տակ, կամ մինչև էդ շուտ գործը ուղարկում են դատարան, իրենց վրից էդ բեռը հանում են: Կամ էդ 5-6 ամսում էլ 2 ամիսը մեկ կամ չգիտեմ՝ ինչքանովա տվել էդ կալանքը, էդ կալանք տվող դատարանը էլի կալանքը երկարացնումա, բայց

արդեն ինքնանպատակ, ինտերցիայի ուժով: Ավելի շատ ինտերցիայի ուժնա գործում կալանքի ժամկետի երկարացման ժամանակ: Ողջամիտ չեն, շատ ժամանակ հաճախ լինումա, որ պաշտպան ենք՝ փաստաբան, ասում ենք, որ հարգելի դատարան, եթե անգամ արդարացվածա եղել անձին կալանավորելը 2 ամիս առաջ, հիմա վերացելա դրա անհրաժեշտությունը: Այսինքն՝ էն հնարավոր քննչական գործողությունները, որոնք դեռ քննիչը պիտի անի, քննիչն արդեն արելա, որևէ ձևով չեն վկայում, որ էս անձը կարող է ողջամտորեն ազդեցություն ունենա պրոցեսի վրա, որովհետև վկաները հարցաքննվել են, առերեսումները լրիվ կատարվել են, էլ ի՞նչ ազդեցություններ: Այսինքն՝ անօրինական ազդեցության վտանգը էապես նվազելա, գրեթե չեզոքացելա կամ գրեթե գոյություն չունի կամ, ինչու չէ, գրեթե, հենց լավ էլ գոյություն չունի: Այ՛, սենց իրավիճակի հետ մենք շատ ենք առնչվում: Կալանավորման հիմնական նյութերը պիտի ողջամտորեն բխի գործի նյութերից, պտի կատարվող քննչական գործողությունների ծավալից, բովանդակությունից բխի անձին կալանավորել, թե չկալանավորել կամ կալանավորել ինչ-որ ժամանակահատված: Սենց կարամ ձեր հարցին պատասխանեն: Կալանավորման հիմքերը ասումա՝ կմիջամտի կթաքնվի, կխոչընդոտի, բայց դա հավաքական տեսական եզրույթներ են: Տեսական եզրույթները կոնկրետացնելու անհրաժեշտությունա պետք, արդեն իրավակիրառը պետք է կոնկրետացնի դրանք, պիտի ճիշտ մեկնաբանվի: Տարիներ շարունակ ձևական մոտեցումա ցուցաբերվել: Ընդամենը վկայակոչվել են էդ հիմքերը՝ առանց կոնկրետ փաստարկներ ներկայացնելու: Հիմա էլա շատ հաճախ վերացականության մեջա միջնորդությունը մատուցվում, դատարանն էլ վերացականության մեջ հաստատում է: Ասում էս, հարգելի քննիչ, հարգելի դատարան, եթե քննիչը ասումա, որ կխոչընդոտի, կթաքնվի և այլն, արդեն քննության չորրորդ ամիսնա: Էդ հիպոթետիկ դատողությունները, առանց կոնկրետ մանրամասների, արդեն չեն կարա բավարարեն անձի կալանավորման կամ կալանքի տակ մնալու անհրաժեշտությունը: Հիպոթետիկ են չափից դուրս: Մի քիչ ավելի պտի կոնկրետացվի տվյալ իրավիճակի համար: Օրինակ՝

այդ ո՞ր վկանա, որ մինչ օրս չի հարցաքննվել, ինչի՞ չի հարցաքննվել, ինչի՞ եք մտածում, որ դուք մինչև նրան հարցաքննեք, էս մարդը պիտի գնա անօրինական ազդեցություն գործադրի: Անօրինական ազդեցության գործադրումը տվյալ վկայի նկատմամբ կարա տվյալ պարագայում լինի, օրինակ, արդեն իսկ վճռորոշ սույն գործով նախաքննությունը շարունակելու կամ դատարանում արդարադատությունը իրականացնելու համար: Դատարանում, շատ անգամ արդեն դատարանում ես ասում խափանման միջոցը փոխի, դատարանն ասումա, չէ, դե կարողա անօրինական ազդեցություն գործադրի: Ասում ենք՝ նախաքննության ընթացքում տուժողը 5 անգամ ցուցմունքա տվել, 2 անգամ առերեսվելա, դատարանում էլ ցուցմունք տվեց, նստեց իր տեղը: Էլ ի՞նչ անօրինական ազդեցության գործադրում, կարա՞ք բացատրեք, հարգելի՛ դատավոր: Էդ եմ ասում, ավելի շատ իներցիայի ուժովա անձի շարունակական կալանքը, ոչ մի բան չկա: Կամ դատարանն ասումա, դե ես, հլը չեմ հարցաքննել դատարանում իրեն, ասում եմ դե ոչինչ, եթե անգամ ցուցմունքը փոխի էլ, դու արդյոք էն անճար մարմի՞նն ես, որ չես կարա ճիշտ գնահատես իրա նախաքննական ու դատաքննական ցուցմունքները: Ի՞նչ, պիտի էս մարդը մնա պարտադիր կալանքի տա՞կ, որ դու տենց որոշես: Այլա հարցը, որ մենք իրավիճակ ունենք, որ անձը գումարա հափշտակել, թաքցնումա էդ գումարը, վարույթն իրականացնող մարմինը չի կարող գտնի էդ գումարը: Էս մարդուն շարունակական կալանքի տակ պահելը, խոսքը վերաբերումա, օրինակ, իրավիճակ ունենք, որ 160 միլիոն գումարա հափշտակել անձը, նախաքննության մարմինը ինչ միջոց ձեռնարկումա, չի կարողանում էդ փողը գտնի: Առնվազն էդ հիմքերից, որ կարա գործնական նշանակություն ունեցող տվյալներ թաքցնի, քանի դեռ ինքը ցուցմունք չի տվել էդ գումարի գտնվելու վայրի վերաբերյալ, ինքը շարունակումա էդ գործողությունը կատարել: Տվյալ պարագայում անձին շարունակական կալանքի տակ պահելը արդարացվածա: Իհարկե գործի առանձնահատկությունները կապ ունեն, որովհետև, ի վերջո, կարողա էդ մարդը էդ հափշտակությունը չի կատարել, բայց էստեղ էդ գործի առանձնահատկությունները այդուհանդերձ պիտի նայվեն: Միջնորդություններն էլ

պիտի լինեն, դատարանի որոշումն էլ պիտի լինի անհատականացված: Քննիչը կարա հիպոթետիկ դատողություններ անի, բայց փաստաբանը կարա ասի, լավ, եկեք էդ հիպոթետիկ դատողությունները փորձենք կիրառել սույն գործի նկատմամբ. արդյոք էդ դատողությունները տեղի՞ն են, հիմնավո՞ր են, անհրաժե՞շտ են: Էս ասպեկտով հաճախ մեխանիկական, ձևական մոտեցում են ցուցաբերում, այսինքն, օրենքի պարզ շարադրանք են անում՝ առանց գործի տվյալ փուլում առկա կուտակված փաստական տվյալներն ու առանձնահատկությունները հաշվի առնելու: Շատ հաճախ լինումա, որ կալանավորում են մեր պաշտպանյալներին, մենք առարկում ենք էդ գործողությունների դեմ, բայց ներքուստ, որ մի քիչ սկսում ենք սառնասրտորեն նայել իրավիճակին, հասկանում ենք, որ ճիշտ է կալանավորումը ինչ- որ ժամանակահատված: Գոնե 20 օր, մի ամիս, երկու ամիս անձը մնա կալանավորման մեջ, էլի ողջամիտ է, որ քննիչը այդ ընթացքում բաներ ունի անելու՝ կախված գործի բարդությունից: Բայց 2 ամիս հետո արդեն վերանում են էդ վտանգները: Էդ վտանգները վերանում են, արդեն, այսպես ասած, եթե սկզբում հանրային շահնա գերակայում, որ անհրաժեշտա անձին կալանավորել, աստիճանաբար քննիչը, որ լրացնումա էդ բացը, էստեղ մասնավոր շահնա արդեն գալի, անցնումա հանրային շահից, որովհետև հանրային շահը արդեն իսկ ապահովվել է: Էս բալանսավորումը շատ հաճախ չեն անում: Մեխանիկական մոտեցումա ընդամենը: Իհարկե նայած դատավոր, էս չեմ ուզում բոլոր դատավորներին ասեմ: Դատավորներ կան բավական պատասխանատվությամբ են վերաբերվում: Հիմա էլ, անցյալում էլ կան դատավորներ, քիչա նրանց տոկոսը, բայց կան, որ պատասխանատվությամբ են վերաբերվում: Մի 15-20 տոկոսը բավական պատասխանատվությամբ են վերաբերվում իրանց կայացվող որոշումներում: Մնացածը արդեն աստիճանաբար նահանջա, երևի 50% -ը լիովին անտարբեր վերաբերմունքա, էնքան որ դակում են, անցնում են առաջ:

Հա, նախնական կալանքը հաճախ հետապնդումա պատժի նպատակ: Գիտե՞ք ինչ, էս վերջերս որոշակի նահանջ եղավ կալանավորումից: Բայց նայած գործ: Լինումա, որ պատժի նպատակա, լինումա, որ ճնշում գործադրելու նպատակա: Հիմա քննչական մարմինը ցուցմունքա ակնկալում անձից, անձը չի տալիս էդ ցուցմունքը, կալանավորում են անձին: Ասում են, որ պիտի կալանավորենք, որ դու տեսնենք՝ ինչ էս ասում: Անօրինական նպատակա դա իհարկե, բայց համենայնդեպս գործիքա քրեական հետապնդման մարմնի մոտ: Շատ հաճախ էլ իրենք ասում են, այո՛, նպատակը արդարացնում է միջոցները: Մենց մոտեցում են ցուցաբերում: Մասսայակա՞ն: Մասսայական նախկինումա շատ կալանավորում եղել: Հիմա, էս կարծում եմ, ողջամիտ ու բազմակողմանի պիտի գնա փաստական հանգամանքները: Էստեղ մենք ողջամտության զգացողությունից նահանջում ենք: Կարողա կալանքների տոկոսները նվազելա իրավամբ, բայց ողջամտության զգացողությունը մնացելա նույնը, մեխանիկականի դաշտումա:

Չէ, տոկոսով չեմ կարա ասեմ, չեմ կարա, բայց նայած ժամանակ, նայած էս ինչ եմ արել էդ ուղղությամբ, նայած հողված: Հողված կա, որ, ասենք սպանության գործերով, իրավիճակ ունենք հիմա, անձին մեղադրում են իր իսկ կնոջը սպանելու մեջ: Բայց գործի փաստական հետևանքները հետևյալն են. ամուսիններով տանն են եղել, կինն ընկելա 3-րդ հարկից 1-ին հարկ աստիճաններով, մի դատաբժիշկն ասելա՝ հնարավոր էր վայր ընկնելու հետևանքով մարմնական այդ հետևանքները առաջանային, մի ուրիշ դատաբժիշկ ասումա, չէ՛, հնարավոր չէր: Երկու եզրակացություն կա: Մեկը մի դատաբժիշկա, մյուսը հանձնաժողովայինա: Հիմա էս մարդուն պահում են կալանքի տակ հեսա մի տարի կլինի: Պահում են կալանքի տակ զուտ նրա համար, որ ինքը սպանությունա: Ոչ մի բան չկա, մեխանիկական մոտեցումա: Ոնց կարա, ո՞նց, սպանությունա, դուրս թողե՞նք: Ասում եմ՝ դուք հասկանո՞ւմ եք, ողջամտորեն հասկանո՞ւմ եք, որ առնվազն 3-րդ փորձաքննությունը պիտի նշանակվի էս գործով: Ու եթե պարզվի, որ էս մարդը անմեղա, դուք

պատկերացնում էք՝ ինչ չարիք էք գործում: Էն նպատակը, որով որ առաջնորդվում էք, թե ոնց էլ որ չլինի, սպանությունա, դուք հասկանում էք, որ կնոջ մարմնի վրա դանակ չէք հայտաբերել, որ հասկանաք, որ ամուսինը անհրաժեշտ պաշտպանական վիճակում էր, վիճակում չէր, ինքնա դանակով խփել, ինքը չի խփել: Սա կարա լիովին դժբախտ պատահար լինի էս ամենը: Դուք հասկանում էք, որ որևէ իրավաչափ նպատակ չկա էս մարդուն կալանավորելու, կալանքի տակ պահելու: Էրեխեքն էլ մնացել են էս մարդու հիվանդ ծնողների խնամքին, այսինքն՝ երկկողմանի որբ են դառել մոր մահանալու և հորը կալանավորելու պատճառով: Դուք հասկանում էք, թե ինչ էք անում: Չեն հասկանում:

Դե, հիմնականում ես ասեմ, վերադաս դատարանները կալանավորման միջնորդությունների երևի մի 20 %-ին է ձեռք տալիս, մնացածին ձեռք չի տալիս, ոնց կա տենց էլ մնումա: Խոսքը վերաբերումա վերաքննիչին: Վճռաբեկը ավելի քիչ. երևի տենց մի 2 %-ինա ձեռք տալիս:

Իմ կարծիքով մարդու իրավունքների եվրոպական հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվեցիան էլա նախատեսում մարդուն կալանավորելու հնարավորություն: Չի լինի, ես կարծում եմ, մարդու իրավունքի սահմանափակումա, բայց եթե ինքը ողջամիտա կիրառվում, ողջամտության տիրույթումա կիրառվում, խախտում չի, մարդու իրավունքի սահմանափակումա, բայց խախտում չի, իրավաչափ սահմանափակումա: Ինչի՞ եմ ասում խախտում չի, որովհետև չկան տենց հայտնի իրավական նորմեր, որ անձին չի կարելի կալանավորել: Մենակ էն բնական իրավունքի տեսության կողմնակիցներն են, որ ասում են մարդը բնության մեջ ազատա, միշտ պիտի մնա ազատ:

Ես ասեմ, որ հաճախ ձևական մոտեցումա ցուցաբերվում կալանքի միջնորդությունների դռնփակ լինելու հետ կապված: Ասեմ՝ ինչի: Ճիշտը դռնփակ լինելնա: Բայց մենք իրավիճակ ոնց ենք ունենում: Ունենում ենք իրավիճակ, որ դահլիճ չեն թողնում, բայց նախաքննական մարմինը մարդուն առաջադրված ողջ

մեղադրանքը հրապարակումն զանգվածային լրատվության միջոցներով, հասուն քննչական ծառայությունը տեղադրումն իրա կայքում, քննչական կոմիտեն տեղադրումն կայքում: Բայց խնդիրը հետևյալն է. տվյալ միջնորդությունների դռնփակ լինելու նախապատմությունը, որ մենք ուսումնասիրում ենք, խոսքը դասագրքային ճշմարտության մասին, էդ միջնորդությունների դռնփակ լինելու բուն միջնորդությունը այն, որ հասարակությունը չտեղեկանա անձի կալանավորման մասին, մարդու իրավունքների, այսպես ասած, մարդու վարկաբեկման վտանգը շատ: Այսինքն՝ որպես մեղադրյալ ներգրավումը և անձին երեքամսյա կալանքի վերցնելը կարա լրիվ անմեղ մարդու նկատմամբ էլ դա կիրառվի, որովհետև այդ պահին մեղավորության, անմեղության հարց չի քննարկվում: Իրավիճակ կարա լինի, որ էդ մարդը երկու ամիս հետո կարա ռեաբիլիտացվի, բայց էն սկզբնական, էն սկզբնական հրապարակումը, որ, օրինակ, անձը մեղադրվումն մանկապղծության մեջ, մեղադրվումն տուշոնկի գողության մեջ, մեղադրվումն ինչ-որ այլ հանցանքի մեջ: Մարդն էլ կարա լինի իր միկրոմիջավայրում, և ոչ միայն միկրոմիջավայրում, կարա լինի հայտնի մարդ ու էդ իրավիճակում մարդու հեղինակությունը, գործարար համբավը միանգամից գետնինն տալիս, մարդու իրավունքի խախտումն տեղի ունենում, որովհետև նախաքննական մարմնի վարկածն է՝ դեռևս չստուգված, ու իրեն մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ, իրան կալանավորելու վերաբերյալ տվյալը տարածվում: Տարածվումն հենց նույն նախաքննության մարմնի կողմից զանգվածային լրատվության միջոցներով: Ես կարծում եմ, որ դա ձևական մոտեցումն է: Ավելին ասեմ. հաճախ էս նույն իրավիճակը վերջին հայտնի իրադարձությունների վերաբերյալ: Մեղադրյալին և նրա պաշտպանին կանչում են և ասում նախաքննական տվյալները հրապարակելու համար կենթարկվեք քրեական պատասխանատվության առանձին և ստորագրություն են վերցնում: Բայց իրանք հրապարակում են նախաքննական տվյալները: Այսինքն՝ հասարակությանը փորձում են կերակրել մի ինֆորմացիայով, որը միանշանակ միակողմանի է: Պաշտպանության կողմին ասում են՝ հանկարծ չխոսաք, հենց խոսաք, գործի տվյալների վերաբերյալ,

ձեզ քրեական պատասխանատվության կենթարկենք, իրանք միակողմանի ուտացնում են էդ ինֆորմացիան հասարակությանը, որը շատ հաճախ սպոնտանա իր պատկերացումներն ու իրավունքները ձևավորում: Դոնփակությունը էստեղ էլ ո՞րնա: Իմ կարծիքով պիտի հնարավորինս միջոցներ ձեռնարկվի, որպեսզի տվյալները չհրապարակվեն: Պողոսյան Պողոսը կալանավորվել է: Ժողովրդի մեծ մասն ասումա, դե որ կալանավորվելա, ուրեմն մեղավորա: Հիմա էդ նույն գործը, որ Ձեզ բերեցի օրինակ, նույն էդ աղջկա ծնողները, այսինքն՝ էդ մարդու աներն ու գոքանչը, չեմ էլ ասում գործի տվյալները, ուղղակի ներվայնանում եմ, ուր տեսնում եմ՝ ինչա կատարվում: Նույն ծնողները ասում են, որ քննիչը մեղադրյալ ներգրավեց ու դատավորն էլ կալանավորեց, ուրեմն մեղավորա, ինքը մեր աղջկան սպանելա: Դավայ, վիզը կտրեք դրա: Ասում ենք՝ սպասի, քննություն պիտի իրականացվի: Ասում են, չէ՛, դե որ կալանավորվեց, ուրեմ հիմք կար, վե՛րջ: Ժողովուրդը տենցա ընկալում: Ինչ եմ ուզում ասել, սա շատ լուրջա: Հենց էդ նույն հասարակությունը սկսումա ճնշում գործադրել: Ազդումա դատարանի վրա, ասումա, չէ՛, դու իրան պետքա բաց չթողես, որովհետև, եթե դատարանը հիմարությունա արել, կալանավորելա, դե որ հիմարությունա արել, ուրեմ մի բան կա, դե որ մի բան կա, ուրեմ դու անօրինական ձևով կարաս իրան ազատես կալանքից: Չգիտեմ, էլի, ծիծաղելու է: Ես ռեալ օրինակներ եմ ասում Ձեզ: Ընենց չի, որ ես ինքս չկալանավորման կողմնակից եմ, լավ էլ պիտի կալանավորել շատ հաճախ, բայց ողջամտության տրամաբանության թելը կտրվումա, ասում ես՝ էս ինչից ինչ վերածվեց:

Կարա արդար դատաքննությունն էլ տուժի հենց էդ իմ ասած, սկսումա հասարակությունը ճնշում գործադրել, տուժումա արդար դատաքննությունը, որովհետև դատավորը առնվազն կաշկանդվումա: Անձին կալանավորում են, տարածումա ստանում, որ դատարանը կալանավորեց, ուրեմ հիմքեր կան կալանավորման: Մյուս ասպեկտը. անձին կալանավորում են, նա անազատության մեջ դժվարա պաշտպանվելու, իր իրավունքների պաշտպանությունը

իրականացնելու: Իր միակ շփումը իր փաստաբաննա էր պահի դրությամբ: Իսկ ազատության մեջ գտնվող ամբաստանյալը արդար դատաքննության իրավունքը ավելի արդյունավետա կարողանում իրականացնի, որովհետև կարողանումա համակարգչից ազատորեն օգտվի, ի պաշտպանություն համապատասխան փաստարկներ գտնի, տվյալներ գտնի, ինֆորմացիա գտնի համացանցում, զրուցի մասնագետների, փորձագետների հետ, ոչ թե իր գործով անցած փորձագետների հետ, այլ, ասենք, կարողա գնալ բժշկական համալսարան մի պրոֆեսորի մի քանի հարց ուղղի իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ, ստանա կարծիք գրավոր, էդ գրավոր կարծիքը բերի դատարան, ասի, հարգելի՛ դատարան, էս սենցա: Բայց հակառակի դեպքում ողջ բեռը մնումա պաշտպանի վրա, պաշտպանի մասնագիտության որակների, բարեխղճության ու ջանասիրության վրա:

Ի՞նչ առումով էք ասում՝ իրավական հետևանքներ ունի՞: Եթե վաղը պարզվի, որ անձը անմեղ էր, ինչ-որ իրավական պատասխանատվության կենթարկվի՞: Էդ իմաստով էք ասում, թե հետագայում, եթե մեղավոր ճանաչվի, թե եթե անմեղ էր հատուցում կստանա, թե չէ: Իրավական հետևանքը երեք առումով. նրան կալանավորողների պատասխանատվություն, նյութական հատուցում, դա պատժի մեջ հաշվարկվումա՞, թե՞ չէ, էդ իմաստով: Պատժի տակ հաշվարկվումա, մյուս երկուսը գոյություն չունեն: Էնտեղ ինչ-որ ձևական բաներա սահմանված էս վերջերս, որ կարա անձը նաև, եթե չհիմնավորի, որ աշխատավարձի կորուստ, վնասա կրել, անձը բարոյական վնասի պահանջ կարա ասի, եթե հիմնավորի իր կատարած ծախսերի ռեալ հիմնավորում, բարոյական ծախսերի պահանջ կարա ասի: Ինչ-որ սիմվոլիկ թիվ են ասել՝ 500,000 դրամի շրջանակներում: Նոր են ներդրել, քաղաքացիական օրենսգրքում նոր են տենց փոփոխություն մտցրել, բայց ինչ ա նշանակում՝ անձը մնա երկու տարի կալանքի տակ, հետո 500,000 հատուցո՞ւմ ստանա, բարոյական վնա՞ս: Էդ չգործող մեխանիզմա, պտի մեխանիզմ ներդրվի, որ յուրաքանչյուր ամսվա համար ինչ-որ X գումար սահմանվի: Ա՛յ, դա կլինի գործուն

մեխանիզմ: Ինչ-որ լողոված բան են դրել: Բայց որ կարա մինչև 500,000 ստանա, էդ ապուշությունա: Դա էլ ներդրեցին նրա համար, որ չունեին բարոյական վնասի հատուցում, նյութական հատուցում էս հարաբերություններում: Մարդը գնում էր դատարան, էստեղ մերժում էին, գնում էր Եվրոպա, Եվրոպան ասում էր, որ մեր միջազգային նորմերով նախատեսվածա, եթե ձեր մոտ նախատեսված չի, կոնվենցիայի խախտում ենք դիտարկում: Էստեղ մի հատ սենց սիմվոլիկ բան նախատեսեցին, որ գնա հասնի էստեղ, իրավիճակ չառաջանա, որ էստեղ նախատեսված չի, կոնվենցիայի խախտումա: Հա՛, նախատեսվածա, բայց քչովա, կասի ձեր երկրի կենսամակարդակը էտա, դրա համար քիչա: Սենց մի ձևական բանա ներդրվել:

Այլընտրանքայի խափանման միջոցներից չեն խուսափում, չէ, ուղղակի շատ մեխանիկական մոտեցում են ցուցաբերում: Ծանր հողվածա՞, հա, բե՛ր կալանավորենք: Մխալա ասել, թե չեն կիրառում: Կիրառում են, նենց չի, որ միշտ խուսափում են: Էտ երևի մի ինչ-որ ժամանակ խուսափել են: Վերցրել, կալանավորել են ու հազարից մեկ են կիրառել ստորագրություն կամ... Կիրառվումա էդ խափանման միջոցները: Տենց չի, որ չի գործում: Ուղղակի շատ հաճախ մեխանիկական մոտեցումա ցուցաբերվում: Հենց ծանր հանցանքա համարվում, վերջ, պիտի կալանավառեն հաստատ: Չեն նայում, արդյոք հիմք կա՞ կալանավորելու: Չկա, մի տարիա քննություն ենք արել, նոր ենք հիմնավորել: Էս մարդը մինչև էդ չի ունեցել մեղադրյալի կարգավիճակ, ապացոդական նյութը հավաքածա, էս մարդն էլ գիտեր, որ թիրախ կդառնա վաղը մյուս օրը ու չի փախել: Առաջադրել ենք, պատշաճ իր վարքագծի մեջա մնացել, ուր տանենք կալանավորենք: Օրինակ, եթե ինձ եք ուզում լսել, էդ Սասնա ծռերին չէր կարելի բաց թողնել: Սա մեր, չգիտեմ ժողովուրդը ո՞նցա մտածում, սա մեր խայտառակություննա: Ո՞նց կարելի էր նրանց բաց թողնել: Իրենք իրենց ընտրությունը ժամանակին արել էին: Գրավով անիմաստ տեղը բաց թողին, շուխուռ ընկավ հանրապետությունում, որ գրավով... չկա տենց բան: Լուրջ եմ ասում:

Պատկերացնո՞ւմ եք, անձը գտնվումա շարունակական կալանքի տակ, որ ինքը ենթադրաբար մեկից փողա պահանջել, կամ չի պահանջել որպես կաշառք: Ենթադրաբար, չունեն փաստ, որ բռնվելա կաշառք ստանալու պահի, իրան բռնում պահում են կալանքի տակ, իսկ էն անձը, որ ավտոմատներով ու նոնակներով զինված մտելա ու մի երկու հոգու էլ ձեռի հետ սպանել են ու ոստիկան են սպանել, գորամաս են գրավել, իրանց թողում են կալանքից դուրս: Դուք պատկերացնո՞ւմ եք մյուս մեղադրյալների հոգեբանությունը ինչա լինում: Խախտվումա: Ասում են՝ ոնց մեզ մեղադրում են ենթադրյալ կաշառք պահանջելու մեջ, որ հլը խիստ վիճելիա, նրանք ակնհայտ մտել են գորամաս, մարդ են սպանել, նրան գրավով թողնում են գնան: Իմ արարքի հնարավոր ապացուցվածությունն ու հանրային վտանգավորությունն ու նրանը: Չգիտեմ, սենց ուր ենք գնում մենք: Աստված տա, լավ տեղ հասնենք:

Այլընտրանքայի՞ն: Չէ՛, դե հերիքա, էլի՝ ստորագրություն, երաշխավորություն, տնային կալանք...

Վատ կարծիքի չեմ տնային կալանքի համար, լավ կարծիքի եմ: Եթե տեխնիկական հագեցվածությունը կարողանան ապահովել: Տնային կալանքը կարող են երկու ասպեկտով կիրառել: Մեկ որ տանը մնա, ախրանա լինի դռան մոտ, դա էլ ռեսուրսի խնդիրա: Եվ երկրորդը՝ եթե ախրանա չկա, անձի վրա համապատասխան դատչիկ դնեն, ու նրա տեղաշարժը ուրվագծվի: Եթե մեկուսարանում պահելու համար ժամկետ չկա, նախաքննության ընթացքում, ասումա, ոչ մեծ ծանրության՝ միջինով մինչև 6 ամիս, առանձնապես ծանրով՝ մինչև մեկ տարի: Դարանում եղած պահից ժամկետային սահմանափակում չկա, ողջամիտ ժամկետ: Նույնն էլ էդ է: Համենայնդեպս տնային կալանքը ավելի մեղմա, քան սովորական կալանքը: Եթե սովորական կալանքը էս կարգավորումների մեջա, տնային կալանքը կարողա նույն ձևով էլ կիրառվի: Չպիտի ավելի խստից ավելի ժամկետներ նախատեսի իմ պատկերացմամբ: Հիմա կա էդ տեխնիկական հնարավորությունը, ի՞նչա եղել որ: Կարող են բրասլետներ տեղադրեն, որ անձը չկարատղանա հանի դրանք, էստեղ էդ

շարժը տեսնեն: Մարդը ո՞րա եղել, ի՞նչա եղել; Ավելին, տուժողն ապրումա Մալաթիայում, ամբաստանյալն էլ ապրումա Կոտայքի մարզում, հանցանքն էլ եղելա կենտրոնում, կարող ենք նայել, էս մարդը ուր գնաց, տուժողի հետ առնչվե՞ց: Եթե հասկանանք, որ պիտի կալանավորվի, որ հեռախոսով էլ չառնչվի, էդ էլ մի առանձին սահմանափակումա: Անձին կալանավորել, չի նշանակում բացառել նրա հեռախոսային խոսակցությունը: Դա լրավուցիչ որոշումովա լինում, որ հաճախ նաև սահմանափակվումա: Բայց մեկուսարաններում շատա անօրինական շրջանառվում հեռախոսներ: Մի ուրիշ բան էլ Ձեզ ասեմ, շատ հաճախ տուժող, վկա խուսափում են խոսել, մինչև էդ անձը չկալանավորվի: Դրա համար էս կարծում եմ, որ եթե կալանավորիք, մարդիկ հանգիստ ցուցմունք տվին, եկան առերեսման, հետո էլ խնդիր չկա: Էդ գուտ քննության շահով եթե նայենք: Գիտե՞ք ինչ, էս կարծում եմ, որ տնային կալանքը երկու իմաստ կարա ունենա: Օրինակ, Երևանի բնակիչա, Երևանի սահմանները հենց հատումա, սկսումա միանգամից ակտիվանալ էդ դատչիկը: Եթե անձը ուզումա փախչի, նայած՝ ինչ հիմքովա կալանավորվել, եթե ուզումա անձը փախնի, արդեն կարան հետևեն: Ասենք՝ իրա սահմանը հատեց, իրա տնից պլյուս-մինուս 150-ը հատեց, արդեն վե՛րջ, տրիվոգ ա առաջանում, անվտանգության ծառայությունը պիտի արձագանքի: Թաքնվել էլ չի կարողանա, որովհետև անընդհատ իրան հետևելու են, գտնվելու վայրը գիտեն, չի էլ կարա ապօրինի սահմանը հատի: Թաքնվելու վտանգը կչեզոքանա, մնումա խուսափելու վտանգը վարույթն իրականացնող մարմիններից կարգապահության տեսանկյունից: Էդ հազվադեպ բանա: Անօրինական ազդեցություննա տուժում ընդամենը: Իմ կարծիքով, եթե ցուցմունք տվելա, արդեն առերեսումներն ավարտվելա, էլ ինչ իմաստ ունի. տուժողի վրա ազդեցություն գործադրելը կարողա վնասի:

Վարչական հսկողության համար ռեսուրս չունենք: Նույնիսկ լինումա, որ անձին քաղաքացիական հիվանդանոց են տեղափոխում բուժման կամ վիրահատության, ռեսուրսը չի հերիքում էնտեղ ապահովել: Մնումա մի ուրիշ

ծառայությունն ստեղծենք: Եթե օրենսդրական փաթեթ դրվի տնային կալանք եթե սահմանեն, կարա գնա աշխատանքի, գա, գործատուի վրա էլ դնեն պարտականություն, որ խիստ հսկողություն սահմանվի, որ աշխատանքի ժամին թույլ չտան ինչ-որ մի տեղ դուրս գա, գնա-գա: Եթե դուրս գա, ուրեմն պիտի ահազանգի համապատասխան մարմիններին, ասի, ես իրան թույլ չտվեցի գնալ, ինքը գնաց: Եթե հիմնարկում կա կարգապահություն հսկող, կարող են իրենց դնել, ռեսուրս էլ կխնայեն:

Անչափահասների կալանքի՞: Նորմալ, նույն ձև, տարբերություն չկա: Անչափահասներն հաճախ ավելի դաժան են լինում, հաճախ չմտածված քայլեր են անում, քան թե չափահաս մարդիկ: Տենց վիճակ ունենում ենք, դրա համար ես չեմ կարծում, որ ասենք անչափահաս են, չպիտի կալանավորեն: Ավելի հնարավորա, որ անչափահասը կարա գնա նույն տուժողին խփի տանը, որ ցուցմունք չտա, քան թե չափահաս մարդը: Տենց իրավիճակ եղելա: Անչափահասները էքսցենտրիկ են: Ես շատ եմ շփվել անչափահասների հետ: Ամենադժվար կոնտիզենտնա էդ 16-17 տարեկանները: 15-16-17 տարեկանները ծայրահեղությունների դաշտում են: Մեկի համար ցուցմունք տալը լավա, մյուսի համար ցուցմունք տալը ավելի լավա մահանա, քան թե ցուցմունք տա, էն մյուսն էլ մյուսի նկատմամբ կարա ցուցմունք տա, ագրեսիվ տրամադրվի մյուսի ցուցմունք տալու պարագայում:

ՔԿՀ-նե՞րը, նայած տեղ: Օրինակ, ազգային անվտանգության մեկուսարանում, այո՛, համապատասխանում են: Վարդաշեն քրեակատարողականում առավելապես համապատասխանումա:, Նուբարաշենում չեն համապատասխանում, Արմավիր քրեակատարողականում միջինոտ վիճակա: Ամենավատը Նուբարաշեննա՝ իր շենքային պայմաններով, խցերի քանակով, սանիտարական պայմաններով, հիգիենայի, ուրիշ շատ բաներով: Ամենապատշաճ վիճակում Ազգային անվտանգությունումա: Բայց էնտեղ ավելի շատ են կալանավորները նեղվում: Էնտեղ կարգապահությունը բարձր մակարդակի վրա է, անօրինական շրջանառվող

հեռախոսներ չկան, հասարակությունից մեկուսացումը ավելի շատա: Դրա համար, եթե էնտեղ մեղադրյալ ենք ունենում, կյանքներս ուտում են. անընդհատ հանդիպումներ են ուզում: Էնտեղ մտնելն էլ ռետուրսա տանում: Փաստաբանի համար, բնականաբար, հաճելի չի մեկուսարան գնալը: Ես չեմ տեսնում նրանց պահման վայրերը, ես տեսնում եմ քննչական աշխատասենյակները, որ տրամադրվում է նաև փաստաբանին՝ անձին տեսակցելու համար, իրենց վստահորդներին: Այսքան տարվա փորձ ունեմ, բազում կալանավորներ ունեմ, անգիր իրանց խոսքերից իմ գլխում ես վերլուծական նյութ ունեմ:

Նկատի ունեք կալանավորումը խելոքացնումա, տալիս ցանկալի ցուցմունքներ: Հա՛, իհարկե օգնում է, բայց ժխտում տանելը անձից է կախված, չես կարա կանխատեսես: Բայց տրամաբանությունը հետևյալնա, եթե անձը 1-2 ամիս մնաց կալանքի տակ, ցուցմունք չտվեց, ուրեմ տվողը չի:

Ես սենց եմ պատկերացնում. լավ կլիներ, որ գրավը նաև պետականացման հնարավորություն լիներ, եթե անօրինական ազդեցության փաստ ֆիքսվեր, ինչը չկա էսօրվա օրենսդրությամբ: Էդ ես հաստատ կուզենայի, որ լիներ: Երկրորդը կուզենայի, որ օրենսդրորեն ամրագրվեր, թեև գրավը սուբյեկտիվ բնույթա, բայց պետքա օրենսդրորեն ամրագրվի, որ գրավը ավելի պիտի մեկ գլուխ ավելի ծանրակշիռ հիմնավորել գրավի մերժումը և չբավարարվել կալանավորման հիմքերի և պայմանների վերաբերյալ հետևություններ շարադրելով: Այսինքն, եթե ասում ենք՝ կա կալանավորման հիմք, կալանավորման պայման, ունենք այս հիմնավորումը կալանավորումը կիրառելու համար, նույն հիմնավորումը չճառայի գրավը մերժելու համար: Գրավը մերժելու համար պետքա էր երկու հիմնավորումից մի գլուխ ավել ծանրակշիռ հիմնավորել, ինչի՞ գրավը պիտի թույլատրվի էս դեպքում: Ավելի կոնկրետ, լրացուցիչ հիմնավորումներ են պետք շարադրել գրավի անթույլատրելիության համար: Ես տենց եմ կարծում:

Դե չափերը, գիտեք ինչ, 500.000 դրամի կիրառում էլ ունենք, 1.000.000 դրամի կիրառում էլ ունենք, 3 միլիոն էլ, 30 միլիոն էլ ունենք, 1 միլիարդ էլ ունենք մեր պրակտիկայում: Կախվածա՝ ինչ բնույթի հանցանքա վերագրվում, կախվածա անձի նյութական վիճակից: Գրավը ինչա՝ երաշխիքա, գումարի կորուստը անձին կոմֆորտնի չի լինի, մարդը նախընտրելու է գումարը չկորցնի, դրա փոխարեն չթաքնվի, անօրինական ազդեցություն չունենա, ոնց որ օրենսդրական փոփոխությամբ ա առաջարկվում: Անձի նյութական վիճակը կամ գրավը մուծելու պատրաստական լինելն ու հնարավոր ազդեցությունը մեղադրյալի վրա: Մեկի համար 3 միլիոն գումարը շատ մեծ գումարա. երբեք էդ գումարը չի թողի ընտանիքի վրա ու լքի: Մեկի համար էլ էդ 3 միլիոն դրամը մի օրվա ծախսա իրա զվարճանքների վրա: Ունենք տենց մարդիկ: Ես կարծում եմ էդ հանգամանքը շատ պիտի հաշվի առնել: Գումարի չափը որոշելիս, էդ շատ էական նշանակություն ունեցողա: Չի կարելի գուտ մեխանիկական մոտեցում ցուցաբերել, որ ծանր հանցանքա, ուրեմ գա 5 միլիոն մուծի: Մեկի համար 5 միլիոնա, մյուսի համար 5 հարյուր հազարը հավասարագորա 5 միլիոնի: Եվ մյուս ասպեկտը. կախվածա նրանից՝ ինչ բնույթի հանցանքա վերագրվում: Եթե անձին վերագրվումա, օրինակ, 2 հարյուր միլիոն հափշտակություն ու էդ վնասը որևէ ձևով դեպոնացված չի, վնասի վերականգնումը, որովհետև անձը կարա ասի՝ ես անմեղ եմ: Բայց հարգելիներս, ես կարամ դեպոնացնել, դատարանի դեպոզիտ հաշվի համարին մուծում էս 2 հարյուր միլիոն դրամը՝ ի երաշխիք, որ ինչ էլ լինի, ոնց էլ լինի գումարը կծառայի տուժողի շահերի վերականգնմանը: Եթե գումարը դեպոնացված չի հափշտակության գործով, ես կարծում եմ, պիտի մեծամասամբ, չի կարելի բացարձակ իմաստով ասել, մեծամասամբ պիտի հափշտակած գումարի չափից ավել լինի: Եթե անձը ամբաստանվում է 2 հարյուր միլիոն դրամի հափշտակության համար, ինքը պիտի առնվազն 2 հարյուր տասը միլիոն գրավ մուծի, կամ համարժեք գույք բերի գրավ ձևակերպելու համար, որովհետև գրավ կարա լինի նաև անշարժ գույքը. օրինակ՝ դատարանը ընդունի էսինչի բնակարանը որպես գրավ, դատական ակտում

ամբագրի, տանեն կադաստր, գրանցեն էդ գրավը հոգուտ դատարանի: Իրավիճակ ենք ունեցել, որ մարդը ամբաստանվում ա 2 հարյուր միլիոնի հափշտակության մեջ, դատարանը վերցրել 5 միլիոն գրավա նշանակել: Քանի՞ տոկոսն ա անում: Մարդը հանգիստ կարա չմտածի. դա որևէ ձևով չի կարա կաշկանդի 5 միլիոն դրամի կորցնելը: Տրամաբանական բան եմ ասում: Բայց եթե անձը ամբաստանվումա մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս հասցնելու համար, անիմաստա 2 հարյուր միլիոն դրամի գրավ կիրառելը, որովհետև գույքային բնույթի հանցանք չի: Ուրիշի փողը հեշտա տնօրինելը՝ էդ գաղափարից ելնելով: Հափշտակած գումարը ուրիշի փողնա, ուրիշի փողը հեշտա տնօրինելը: Սեփական գումարի նկատմամբ ավելի սրտացավ ես, քան ուրիշի գումարի: Էս տրամաբանությունն էլ էսօր ոչ մեկը չի պահում: Դատարաններն էլ չեն պահում: Խոսում ես, սենց նայում են վրեղ՝ զարմացած, թե էս ի՞նչ ես խոսում: Դատավորը լավ էլ հասկանումա՝ ինչ ես խոսում:

Շնորհակալություն